600 0007 24. 03. 00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2000 թվական № 7
ք. Երևան

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. սեպտեմբերի 1-ի № 42 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել՝

1.1 Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվության № 1-1 և հաշվետվությանը կից ներկայացվող տեղեկատվության №№ 1-2, 1-3, 1-4, 1-5, 1-6, 1-7, 1-8, 1-9 ձևերը (կցվում են):

1.2 ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվության և հաշվետվությանը կից ներկայացվող տեղեկատվության ձևերի լրացման հրահանգը (կցվում է):

2. Սահմանել, որ ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտները ՀՀ էներգետիկայի հանձնաժողով հաշվետվություն են ներկայացնում նաև ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.1999թ թիվ 433 որոշմամբ հաստատված՝ կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով՝ միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերով:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1998թ. Սեպտեմբերի 1-ի «ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական տեղեկատվությունների ձևերի հաստատման մասին» № 42 որոշման 1.1 կետը:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***